



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



Տեղեկագիր

2017-2018 թվականներին ՀՀ սահմանադրական
դատարան ներկայացված ՀՀ մարդու
իրավունքների պաշտպանի հատուկ
դիրքորոշումների սեղմագիր

ԵՐԵՎԱՆ 2018



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**



Տեղեկագիր

**2017-2018 թվականներին ՀՀ սահմանադրական դատարան
ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ
դիրքորոշումների սեղմագիր**

-Երևան 2018-

Բովանդակություն

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ	3
2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ	7

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1 Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և 143-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործի կապակցությամբ

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և 143-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության հարցը քննարկվել է այնքանով, որքանով այդ դրույթները հնարավորություն չեն տալիս քրեակատարողական հիմնարկների վարչակազմերին անհապաղ ազատ արձակել անձին, ում նկատմամբ դատարանի կողմից որպես այլընտրանքային խափանման միջոց ընտրված գրավի չափը մուծված է ու ներկայացված է այդ մասին ապացույց և տալիս են հնարավորություն լրացուցիչ պահանջել նախաքննության մարմնի որոշում կամ հանձնարարություն՝ անձին ազատ արձակելու կապակցությամբ:

Դիմումի ուսումնասիրության արդյունքում ներկայացվել է դիրքորոշում առ այն, որ պատշաճ օրենսդրական մեխանիզմների անբավարարության, ինչպես նաև գործնականում դրանց կիրառության պատճառով է, որ քննվող անձը զրկվել է իրականացնել անձնական անձեռնմխելիության իր հիմնարար իրավունքը:

2 Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխում ընդգրկված նորմերի և մասնավորապես 451-րդ, 453-րդ, 455-րդ, 457-րդ, 458-րդ, 459-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի կապակցությամբ

Օրենսգրքի 451-րդ, 453-րդ, 455-րդ, 457-րդ, 458-րդ, 459-րդ հոդվածների սահմանադրականության հարցը քննարկվել է այնքանով, որքանով մեղադրական

եզրակացությամբ դատարան ուղարկված գործով անմեղսունակության հարցը պարզելու դեպքում դատարանին կամ մեղադրողին (դատախազին) իրավունք չի վերապահվում բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու վարույթ հարուցելու և ըստ այդմ՝ անձի նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացնելու և անվտանգության միջոց կիրառելու, որի դեպքում փաստացի խախտվում են անձի իրավունքներն ու օրինական շահերը: Մասնավորապես՝ գործող օրենսդրական կարգավորումների արդյունքում խախտվում է անձի՝ օրինական ներկայացուցիչ ունենալու, մեղադրանքի ձևով քրեական հետապնդման չենթարկվելու, այդ անձի նկատմամբ խափանման միջոց չկիրառելու, ինչպես նաև հոգեկան հիվանդությամբ պայմանավորված հոգեբուժական հաստատությունում տեղավորվելու և բուժման և հսկողության տակ գտնվելու իրավունքները:

Դիմումի շրջանակներում ներկայացվել է դիրքորոշում այն մասին, որ քննարկվող դեպքի շրջանակներում ուսումնասիրվող նորմերի առկայության պարագայում պետությունը ճանաչել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի մի շարք իրավունքներ, սակայն չի սահմանել յուրաքանչյուր իրավիճակում դրանց իրացման համար անհրաժեշտ մեխանիզմներ:

3. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի կապակցությամբ

Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականության հարցը քննարկվել է այնքանով, որքանով սահմանափակվում է ՀՀ վարչական դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ գլխի կանոններով անձի՝ քննվող գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման իրավունքը:

Դիմումի կապակցությամբ հատուկ կարծիք է ներկայացվել դատական բողոքարկման ինստիտուտի վերաբերյալ՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից նախկինում ներկայացված իրավական դիրքորոշումները:

4. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի դրույթների ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի կապակցությամբ

Օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի դրույթների սահմանադրականության հարցը քննարկվել է այնքանով, որքանով վերը նշված հոդվածի 6-րդ մասում գործածված «մասնակցում է» բառը վերաբերվում է գրանցված՝ աճուրդում հաղթող ճանաչվելու շահ ունեցող անձանց, կազմակերպչին և արձանագրողին և չի վերաբերվում այդ կարգավիճակը չունեցող անձանց՝ դիցուկ քաղաքացիական հասարակության ինստիտուտներին, լրագրողներին և այլն, և այնքանով, որքանով նույն հոդվածի 7-րդ մասով արձանագրված աճուրդի սկսվելու պահից դահլիճ մտնելու արգելքի կիրառման արդյունքում խախտվում է տեղական ինքնակառավարման տեսանելի և հրապարակային լինելու բնույթը, ինչն էլ հանգեցնում մարդու մի շարք հիմնարար իրավունքների խախտման:

Հատուկ կարծիքը ներկայացվել է տեղեկատվություն ստանալու իրավունքի և կարծիքի ազատ արտահայտման իրավունքի դիտարկման տեսանկյունից՝ հաշվի առնելով այն, որ խնդրո առարկա կարգավորումները վերաբերում են համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդին, որին ըստ էության համայնքի ներկայացուցիչները մասնակից չեն կարողանում դառնալ:

5. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով

Օրենսգրքի՝ «Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները» վերտառությամբ 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է.

«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝
(...)

10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար...»: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի ուղղակի կարգավորում, որի պայմաններում մահացածի մերձավոր ազգականների կամ այլ շահագրգիռ անձանց կողմից մահացածի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցման դեմ առարկելը խոչընդոտ կհանդիսանա այդպիսի որոշում կայացնելու համար: Մինչդեռ ենթադրյալ հանցանք կատարած անձի մահվան դեպքում նրա մոտակա հերթի ժառանգները նրա իրավունքների պաշտպանության նպատակով պետք է իրավունք ունենան պահանջել վարույթի շարունակություն, որը մահացածի, ինչպես նաև նրա ընտանիքի բարի համբավի պաշտպանության եղանակ է: Բացի այդ, անձի արդարացման դեպքում՝ նրա ժառանգները ձեռք են բերում դրանից բխող մի շարք քաղաքացիական բնույթի իրավունքներ:

Ըստ այդմ, հարցը դիտարկվել է մահացածի իրավահաջորդների իրավունքների տեսանկյունից:

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի կապակցությամբ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի՝ կալանքի կատարման նորմեր սահմանող դրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կալանքը կրելու կարգը և պայմաններն առավել խիստ են: Նշված կարգավորումներով հանդերձ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ ՀՀ քրեակատարողական հիմնարկներ այցերի և ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության ներկայացուցիչների կողմից քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկման այցերը վկայում են, որ գործնականում կալանավորված անձինք կամ դատապարտյալները նախընտրում են, որ որոշակի ժամկետով ազատազրկման պատժատեսակի փոխարեն իրենց նկատմամբ ընտրվի կալանքն:

Առանձնազրույցների արդյունքում պարզվել է, որ այդպիսի նախընտրությունը պայմանավորված է նրանով, որ կալանքի համար, ի տարբերություն որոշակի ժամկետով ազատազրկման պատժատեսակի, նախատեսված է առավել կարճ ժամկետ: Այսինքն՝ չնայած առկա իրավունքների սահմանափակման, ազատությունից զրկված անձինք նախընտրում են պատիժը կրել առանց այդ իրավունքների, սակայն առավել կարճ ժամանակահատվածով, քան՝ իրավունքների առավել լայն շրջանակով, սակայն առավել երկար ժամանակահատվածով:

Միաժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ուսումնասիրվել են միջազգային չափանիշներ և միջազգային փորձ, որը վկայում է

ազատությունից զրկված անձի իրավունքների, այդ թվում՝ ընտանիքի անդամների հետ տեսակցության իրավունքի ապահովման համար անհրաժեշտ երաշխիքների անհրաժեշտության մասին, որոնց վերաբերյալ մանրամասն վերլուծություն է ներկայացվել դատարանին:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ և 2211 հոդվածների՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի կապակցությամբ

Հատուկ դիրքորոշման ներկայացման շրջանակներում ուսումնասիրվել են դատավարական ժամկետները և դրանց միատեսակ կիրառության հարցը: Պաշտպանի կողմից քննարկվել է այն, որ օրենքով դատական բողոքարկման համար 1 ամիս ժամկետ սահմանելով, նախատեսվել է այն ժամանակահատվածը, որի ընթացքում կողմն օբյեկտիվորեն հնարավորություն կունենա վճիռը բողոքարկելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ: Այս դեպքում հիշատակման է արժանի նաև այն կարգավորումը, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտնելուց հետո, դատավարության մասնակիցներին ընձեռնվում է վերադասության կարգով դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման մեկամսյա ժամկետ, որը անհրաժեշտ է քննարկել հատկապես փետրվար ամսվա համար: Այսպես, փետրվար ամիսը բաղկացած է 28 օրից (նահանջ տարիներին՝ 29 օր) և եռօրյա ժամկետում դատական ակտը անձին տրամադրելու/ հասանելի դարձնելու դեպքում անձը կունենա համապատասխանաբար 25 և 26 օր նահանջ տարիների համար, ինչը խնդրահարույց է արդար դատաքննության իրավունքի և դատարանի մատչելիության տեսանկյունից:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների՝ «եզրափակիչ մասում» բառակապակցության ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցի վերաբերյալ

Հատուկ դիրքորոշմամբ անդրադարձ է կատարվել այն հարցին, թե Սահմանադրական դատարանի որոշման միայն եզրափակիչ հատվածում ամփոփված բովանդակությունը որպես նոր հանգամանք ընդունելը որքանով է ծառայում իր նպատակին և արդյոք ամբողջությամբ կարող է արտացոլել որոշմամբ արտահայտված Սահմանադրական դատարանի ամբողջական դիրքորոշումը: Սահմանադրական դատարանի որոշման յուրաքանչյուր հատվածում ամրագրված դիրքորոշումները, վերլուծությունները և իրավական գնահատականները հարկ եղած դեպքում պետք է հավասարապես կիրառելի լինեն որպես նոր հանգամանք և դրվեն դատական ակտի վերանայման հիմքում:

4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «*վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի 8) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը*», իսկ նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ «*այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության*»: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է վերաքննիչ բողոքի ձևական պայմաններ, որոնցից է նաև բողոք բերող անձի ստորագրության առկայության պահանջը: Վերջինս հետապնդում է բողոք բերող անձին իդենտիֆիկացնելու նպատակ և ուղղված է

արդարադատության պատշաճ կազմակերպմանը: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 2-րդ մասը որպես նույն հոդվածի 1-ին մասի պահանջների չպահպանման հետևանք է սահմանում բողոքն առանց քննության թողնելը, ինչի արդյունքում անձը, փաստորեն, զրկվում է բողոքը կրկին ներկայացնելու հնարավորությունից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերաքննիչ բողոքարկման տարբերվող կարգավորում նախատեսելը ուսումնասիրությունների արդյունքում խնդիրը քննարկվել է արդար դատաքննության իրավունքի իրացման տեսանկյունից: Խնդիրն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է վերաքննիչ բողոքի ձևական պայմաններ, որոնցից է նաև բողոք բերող անձի ստորագրության առկայության պահանջը: Վերջինս հետապնդում է բողոք բերող անձին իդենտիֆիկացնելու նպատակ և ուղղված է արդարադատության պատշաճ կազմակերպմանը: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 2-րդ մասը որպես նույն հոդվածի 1-ին մասի պահանջների չպահպանման հետևանք է սահմանում բողոքն առանց քննության թողնելը, ինչի արդյունքում անձը, փաստորեն, զրկվում է բողոքը կրկին ներկայացնելու հնարավորությունից:

Նշված իրավիճակը դիտարկվել է արդար դատաքննության իրավունքի իրացման տեսանկյունից: Համեմատական վերլուծություն է իրականացվել նաև վերաքննիչ բողոքների կապակցությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգավորումների հետ, որոնց պարագայում վերաքննիչ դատարանները վերադարձնում են թերություններով բերված բողոքը, և անձը ունենում է վերաքննիչ բողոքի թերությունները շտկելուց հետո այն նորից ներկայացնելու հնարավորություն:

5. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կարգավորումների ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել զինծառայողների ծառայությունից կամ աշխատանքից ազատվելիս չօգտագործված բոլոր արձակուրդների համար դրամական հատուցում ստանալու իրավունքի չապահովմանը: Խնդիրն այն է, որ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ «Զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին տրվում է փոխհատուցում՝ ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով: Սույն մասում նշված դեպքում չօգտագործված արձակուրդի օրերի հաշվարկում չեն ներառվում զինծառայողի՝ սույն օրենքի համաձայն՝ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում չներառվող ժամանակահատվածների օրերը:

Արդյունքում՝ օրենքի ընդունմամբ այն զինծառայողները, ովքեր հերթական արձակուրդից չեն օգտվել ավելի քան երկու տարի, գրկվել են չօգտագործած արձակուրդի դրամական հատուցում ստանալու իրավունքից, ուստի նաև խախտվել է վերջիններիս սեփականության իրավունքը:

Հարցը դիտարկվել է խտրականության բացառման տեսանկյունից, քանի որ համանման իրավահարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտեր չեն նախատեսել նման սահմանափակումներ:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը գործը դատական քննության նախապատրաստելու վերաբերյալ գլխում գործը դատական քննության նախապատրաստելիս ընդունվող որոշումների հետ մեկտեղ դատարանին պարտավորեցնում է անդրադառնալ նաև հնարավոր խափանման միջոցների հարցին: Մասնավորապես, Օրենսգրքի 300-րդ հոդվածի համաձայն՝ «որոշումներ կայացնելու հետ միաժամանակ, բացի գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշումից, դատարանը պարտավոր է քննել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում»: Օրենսգրքը գործը դատական քննության նախապատրաստելու հարցի քննարկմանը դատավարության որևէ կողմի մասնակցության պահանջ չի ներկայացնում: Ստացվում է, որ Օրենսգրքը հնարավորություն է տալիս անձի նկատմամբ ազատությունից զրկման հետ կապված խափանման միջոցի ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ հարցեր քննարկել տվյալ անձի բացակայությամբ:

Հատուկ դիրքորոշման շրջանակներում ուսումնասիրվել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով կատարելու կարգ չնախատեսելու խնդրի սահմանադրականության հարցը:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից վերլուծություն է ներկայացվել նաև դատական ակտերի պատճառաբանվածության հիմնահարցի վերաբերյալ: Փաստորեն, չապահովելով դատարանի առջև կանգնելու իրավունքը, անձը զրկվում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն կիրառելու վերաբերյալ հիմնավորումները և պատճառաբանությունները վիճարկելու հնարավորությունից:

Վերջինս հատկապես խնդրահարույց է՝ հաշվի առնելով կալանք նշանակելու և կալանքի ժամկետը երկարացնելու դատարանների կողմից ձևավորված պրակտիկան այդ որոշումների պատճառաբանվածության տեսանկյունից:

7. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի, «Պետական տուրքի» մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ գանգատներով ձևավորված պրակտիկայի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ

Անդրադարձ է կատարվել վարչական դատավարության ընթացքում գանձվող պետական տուրքի, պետական տուրքից ազատելու վերաբերյալ օրենքով նախատեսված կարգավորումներին, դրանց՝ դատարանների կողմից տրված մեկնաբանությանը:

Ձևավորված պրակտիկայի համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի հիմքով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելու փոխարեն դատարանները կիրառում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածը և բողոքաբերներին պարտավորեցնում վճարել պետական տուրքի գումարը այն դեպքերում, երբ բողոքաբերների կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու որոշման դեմ բերված բողոքը մերժվում է:

«Պետական տուրքերի մասին» ՀՀ օրենքի կիրառման ենթակա դրույթները չեն նախատեսում պետական տուրքի գանձման հնարավորություն: Այսինքն՝ նման հանգամանքներում դատարան դիմելու համար պետական տուրքի գանձում նախատեսված չէ օրենքով, իսկ նման հանգամանքներում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով պետական տուրքի գանձումը

հակասում է իրավական որոշակիության սկզբունքից բխող կանխատեսելիության պահանջին:

8. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Վարչական դատավարության օրենսգրքի 13-րդ գլուխը նախատեսում է գործերի ընդդատության կանոնները: Վերոնշյալ գլխի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկն ընդդատյա է վարչական դատարանին, իսկ մյուսը՝ ընդհանուր իրավասության դատարանին, քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը: Միաժամանակ, Քաղաքացիական օրենսգրքի 3-րդ գլուխն ամրագրում է գործերի ենթակայությունը և ընդդատությունը: Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկը ենթակա է առաջին ատյանի դատարանին, իսկ մյուսը՝ վարչական դատարանին, քննում է այն դատարանը, որին ենթակա է հիմնական պահանջը:

Միաժամանակ երկու օրենսգրքերը հիմնական գործի որոշման հարցում նախատեսում են միևնույն կանոնը: Այսպես, Վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասերի համաձայն՝ հիմնական է այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է դրանից ածանցվող պահանջների լուծման ելքը:

Ստացվում է, որ երկու օրենսգրքերը տալիս են համանման կարգավորումներ այն դեպքերի մասին, երբ դատարանին ներկայացվում է մեկից ավելի պահանջ և պետք է որոշվի, թե որ դատարանն է քննելու գործը: Հիմնական պահանջի հաշվառմամբ գործի բաշխման տրամաբանությունը ևս մասնագիտական և ընթացակարգային

առանձնահատկությունների ապահովմամբ դատական պաշտպանության իրավունքի իրացումն է: Կարևոր է նաև նշել, որ հիմնական և ածանցյալ պահանջների պարագայում ցանկալի է այդ երկուսի միասին քննությունը, որպեսզի ապահովվի գործի լիարժեք քննությունը¹:

Չնայած վերոնշյալ կանոնների, Սահմանադրական դատարան հասցեագրված դիմումը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, օրենսդրական կարգավորում չեն ստացել բոլոր դեպքերը, ինչի արդյունքում հարցը կարող է քննվել այն դատարանի կողմից, որը նման իրավասություն չունի:

9. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցի վերաբերյալ

Հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի համաձայն՝ հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարում են դատական կարգով հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելու և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելու դեպքում: Միաժամանակ, օրենքով չի կարգավորվում այն հարցը, թե արդյոք այդ պարագայում անձը ազատվում է չվճարված հողի հարկից, թե՛ ոչ: Ուստի, այս հարցը ևս թողնվում է դատարանի որոշմանը:

Ըստ այդմ՝ տեղի է ունենում անձի՝ սեփականության իրավունքից զրկում: Հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելու և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելու դեպքում հողամասի նկատմամբ իրավունքների հարկադիր կարգով դադարումը դատական կարգով Հողային օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված դրույթը հատուկ դիրքորոշման շրջանակներում դիտարկվել է սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքի և դրանից զրկելու համաչափության սկզբունքի տեսանկյունից: Բարձրաձայնվել է նաև հարկադիր կարգով իրավունքների

¹ Համանման դիրքորոշում է արտահայտել Սահմանադրական դատարանը 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ 787 գործի շրջանակներում:

դադարման պարագայում անձի՝ չվճարված հողի հարկից ազատվելու չկարգավորման օրենսդրական բացի խնդրի մասին:

10. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Ուսումնասիրվել են ՀՀ քրեական դատավարությամբ սահմանված վճռաբեկ և վերաքննիչ բողոքներ ներկայացնելու հիմքերը: Ըստ այդմ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներից ակնհայտ է դառնում, որ ի տարբերություն հիմնարար խախտման հիմքով վերաքննիչ բողոք բերելու հիմքով օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի՝ նույն հիմքով վճռաբեկ բողոք բերելը որևէ ժամկետով սահմանափակված չէ, եթե այն ուղղված է անձի վիճակի բարելավմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշյալ դրույթը քննարկվել դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների և դրանց սահմանափակման տեսանկյունից:

11. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 97-րդ հոդվածի սահմանադրականության հարցը քննարկվել է անձի, ում նկատմամբ վարչական գործով վարույթը կարճելու մասին որոշում է կայացվել, արժանապատվության, պատվի ու բարի համբավի պաշտպանության տեսանկյունից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համադիր վերլուծությունից հետևում է, որ որևէ տարբերակում առկա չէ հայցվորի (օրինակ պետական մարմնի)՝ հայցից հրաժարվելու հիմքով վարչական գործի վարույթը կարճելու դեպքերի համար: Նշված

հիմքով վարույթը կարճելիս, միաժամանակ դադարեցվում է նաև նույն վարչական գործի շրջանակներում պատասխանողի համար ապացուցման հետագա գործընթացը: Հայցվորի հայցից հրաժարվելու հիմքով վարչական գործի վարույթի կարճման արդարացման վճռի կայացման անհնարինության հարցը դիտարկվել պատասխանողի համար արժանապատվության, պատվի ու բարի համբավի ապահովման տեսանկյունից:

12. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի» կապակցությամբ

Ներկայացված հարցի ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել այն հարցին, որ Սահմանադրական դատարանի որոշման մեջ վիճարկվող նորմի սահմանադրաիրավական մեկնաբանության առկայության պարագայում, տվյալ նորմը դատարանների կողմից կիրառվում է այլ մեկնաբանությամբ:

Սահմանադրական դատարանը քննելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության դիմում՝ 2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշմամբ վիճարկվող նորմը ճանաչել է Սահմանադրությանը չհակասող՝ այդ մասի առաջին նախադասության դրույթների սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ՝ նկատի ունենալով, որ ներքոհիշյալ դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի պոզիտիվ համաձայնությունը, ինչը կփաստի գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը:

Նշվածի հետ մեկտեղ Սահմանադրական դատարանը վերը նշված որոշման, բայց արդեն պատճառաբանական մասում ծավալուն վերլուծության ենթարկելով վիճարկվող նորմը, մեկնաբանել էր այն՝ հստակ բացահայտելով դրա կիրառության շրջանակները:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը հստակ սահմանել է Դատարանի կողմից կայացվող որոշումների կատարման ամբողջականության պատվիրան, ընդգծելով այն, որ Սահմանադրական դատարանի՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշման իրավական հետևանքը պայմանավորված չէ տվյալ իրավական դիրքորոշման՝ Սահմանադրական դատարանի որոշման այս կամ այն մասում ամրագրված լինելու փաստով:

Միևնույն ժամանակ հարկ է հստակ ընդգծել այն, որ թեև ՍԴՌ-1359 որոշումը կայացվել է 2017 թվականին, այնուամենայնիվ այն պետք է ուղենշային լինի նաև նախկինում կայացված որոշումների նկատմամբ և Սահմանադրական դատարանի բոլոր որոշումները դատարանների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գործածվի իր ամբողջության մեջ՝ այլ ոչ միայն որոշման եզրափակիչ հատվածը:

13. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի կապակցությամբ

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքը երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք է վերապահել ազգային

անվտանգության, հատուկ քննչական կոմիտեի և քննչական ծառայության քննիչներին: Մինչդեռ, հարկ է նկատել, որ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք վերապահված չէ հարկային և մաքսային մարմինների քննիչներին: Տվյալ հարցն ուսումնասիրվել է խտրականության տեսանկյունից:

14. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշման Հավելված N 1-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի կապակցությամբ

Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեն երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը: Նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու կարգը, նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու համար մյուս երեխաներին և զավակներին հաշվի առնելու պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Վերոնշյալ կարգավորումների արդյունքում ստացվում է, որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվում նոր ծնված երեխայի հորից սերված երեխաները և զավակները, *եթե դատարանի որոշմամբ նրանց խնամքն անչափահաս ցարիքում հանձնվել է նոր ծնված երեխայի հորը*: Այսինքն, նման օրենսդրական պահանջ ներկայացված չէ նոր ծնված երեխայի մոր համար: Ընդ որում՝ հարկ է ընդգծել, որ վերոնշյալ դրույթը լրացվել է ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1178-Ն որոշմամբ և նախկինում չի գործել: Ավելին, Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ հոդվածի իմաստով երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը

տարբերակվում է նոր ծնված երեխայի հերթական կարգաթվով՝ հաշվի առնելով նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների թիվը: Ըստ այդմ՝ հարցը դիտարկվել է խտրականության տեսանկյունից: